ԺԵ ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 27 ՆԱԽԱԿԻՐ 1910—ՎԱՌՆԱ — ԹԻՒ 37

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՌՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 Տոլ.
Վեցամսեայ 1 Տոլ.

ԿԱՆԽԻԿ

ԹԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄՆԴ.

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԱԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԱՓԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԼՍԵԼ
Redaction du Journal
„Iravounk"
Varna

Редакция на
Вѣстникъ
„Иравункъ"
Варна

Գրուբիւնք ետ չեն տրուիր

rev. Père G. Kalemkérian Michitaris
tengasce № 4
Vienne

ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Մեր ընթերցողներէն շատերը յիշելու են անշուշտ մեր այն դիտողութիւնները՝ զոր աւանդրած էինք այս սիւնակներու մէջ, երբ Եղիշէ եպիսկ. Դուրեան Արմաշի դպրիվանքէն հանելով Զմիւռնիոյ Առաջնորդ կը դնէին։ Մարդը Արմաշի մէջ իր ծանօթ և անվիճելի գրական կարողութիւնը յոգուտ Ազգին կը ծառայեցնէր, հոն՝ իր կոչումին, իր դերին մէջն է։ բայց զինք ըզմիւռնիոյ Առաջնորդ կարգելով սխալ մը կը գործուէր, քանի որ հոս վարչագիտութիւն պէտք էր և Դուրեանի վարչական կորոգութեան և ընդունակութեան մասին ոչ մէկ տպաւորութիւն չկար։ այդ սխալ քայլով Դպրեվանքի ուսանողութեան զրկանք կրեցաւ, իսկ Զմիւռնիացիք անստոյգ խարխափանքի կը մատնուէին։ Ամէնքս ալ կը յիշենք թէ Դուրեանի առաջնորդութեան շրջանին ըզմիւռնիոյ հայութիւնը ինչ սարսափներու մատնուեցաւ՝ համիտական բռնակալութեան և մեր Դաշնակցականց սխրագործութեանց հետևանքով, որոնց սահման մը դնել և մեղմացուցած մ՝առաջ բերել չի յաջողեցաւ Դուրեան Առաջնորդը հակառակ իր բոլոր բարի տրամադրութեանց։ վասն զի ինք վարչագետ չէր, այլ մի այն գրի ու դրչի մարդ էր։

Հուլիսի 8ին հուչակուէն առաջ եկած գինովութեան միջոցին ևս Ազգը նոր սխալ մը ևս գործեց Դուրեանը Պատրիարքական Տեղապահութեան կոչելով և ի՞նչ տեսանք հոն։ Կատարեալ Ռաբէլոն մը։ Գումգաբուի Պատրիարքարանին մէջ ու շուրջ։ այդ շրջանին էր որ ինպաստ գաւառացի հայուն աշխարհի ամէն կողմերէն հասած 7000 լիրայի չափ ահագին գումարը 1–2 ամսուան մէջ հալեցաւ Պատրիարքարանի սեմերուն մէջ առանց մէկ փարա գաւառ հասնելու։ Եւ այս շնորհիւ Դուրեանի անվարչագիտութեան և անվճռականութեան։

Այս ամէնէ վերջ մեծագոյն սխալն էր որ գործեց Ազգ. Ժողովը նոյն Դուրեանը Պատրիարքութեան կոչելով։ Եւ ահա ոտեղծուեցաւ ներքին այն տխուր վիճակը որ հասաւ ներկայ անիշխանական կացութեան և մեր Ազգային իշխանութեան ազդեցութիւնը ինկաւ այն աստիճանին որ Ազգ. Վարչութիւնը վարժապետ մը պաշտօնէ հանելու ան կարող ղգաց ինքզինքը։ վասն զի լիրբերու խմբակ մը երես առած օրուան Պատրիարքէն յանդգնութիւնը կունենար այլևս սպառնալիքներու տակ դողահար ընելու Ազգ. Պատրիարքարանի ամբողջ կազմը, և գոյծը եկաւ հասաւ մինչև հոն որ այդ լիրբերու խմբակէն սրիկայ մը գաւազանով չսխալեցաւ ազգին Վարչապետին գլուխը և անպատիժ մնաց Դուրեան Պատրիարքի պաշտպանութեանը շնորհիւ։ վասնզի «ան ալ իր զաւակն է՝ եղեր և «իր իշխանութիւնը միայն բարոյական»։

Պատրիարքին վերջերս բաւմից յեղյեղած այս չ՝կերտեալ խօսքերը միայն բաւական են ապացուցանելու թէ ինք գործնականին մէջ անկարող է ըմբռնելու «իշխանութիւն» բառին նշանակութիւնը և բոլորովին անատակ գոյծադիր իշխանութիւն մը վարելու, որպիսին է Հայոց Պատրիարքութիւնը։

Ֆ. Դուրպէր.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՈՒԱՆ ՎԻՃԱԿԷՆ

Վան, 15 սեպտեմբերի

Մեր վալի Բէքիր-Սամի-բէյը գաւառներում պտոյտ անելուց ու. վերադառնալուց յետոյ քիւրդերը որոշ գործունէութիւն են ցոյց տալիս, իսկ սա վերագրվում է այն բանին, որ վալին իր պտոյտի միջոցինչատ փաղաքշանք ցոյց տուեց քիւրդ պետերին։ Ընդանց՝ վրանելում հիւր եղաւ, պատուեց նրանց ու մինչև անգամ շատ տեղերը էլ յորդորեց հասարակ ժողովրդին, որ մինչև այսօր իրանց քիւրդ աղաներին ինչ կերպ յարգանք ու հնազանդութիւն որ յայտնել են, կրկին չարուսկակեն։ Իսկ այս քարոզը արտասանված մի վալիի շրթունքներից, բաւական եղաւ, որ քիւրդ աղաները իրանց չվթան կրկին դնեն հայ ու քիւրդ աշխատաւոր ժողովրդի շլինքին և պահանջեն նրանցից նախկին տարապարհակները։ հմարեն նրանց իբրև իրանց ստրուկները, ինչպէս էին առաջ։ քանի դեռ սահմանադրութիւնը չէր հրատարակվել։

Քիւրդ աղաները չեն բաւականանում միայն այս տարվայ օրամներով (ձրի աշխատութիւն, դարապարհակ) այլ պահանջում են մինչև իսկ նախորդ երկու տարիների օրամներն էլ, երբ ժողովուրդը «հիւրիյէթ» (աղատութիւն) բառը լսելիս իրաւունք էր համարել դադրեցնել իր օրամները, իսկ վալիը քարոզը հրապարակեց։ ցոյց տալով նրա՝ց որ սահմանադրութիւնից յետոյ էլ ոչ՝ մի բան չէ փոխվել և թէ իրանք նորից նախկին ստրուկներ են, իսկ աղաները՝ իրանց տէրերը։

Եւ ահա վերադարձել ենք սահմանադրութիւնից առաջ եղած շրջանին համեդեան բէժիմը վերադարձել է։ օրամներից զատ՝ աղաները իրանց տէր են համարում հողին և աչքի ընկած արգասաւոր արտերը գրաւում ու վարում են։ չէ՞ որ ստրուկը հող էլ չի ունենայ, «երանի՛ թէ վալին չէր եկել, այս կողմերում չէր շրջել։ արդեօք սահմանադրութիւնը յե՞տ է առնվել»—գրում ու հարց են անում գաւառներից ապշած, հիասթափված։

Վերսկսվել են նաև ալան-թալանները։ յափշտակութիւնները։ Քիւրդական հրոսակախմբեր շրջում են գիւղերում ու ճանապարհների վրա կողոպտում են ճամբորդներին, թալանում են կարաւաններն ու քշում, տանում են ոչխարների հօտերը, կովերի, եզների ու ձիերի նախիրները։ եթ որ հին բէժիմը վերադարձել է, օրամները վերսկսվել են, աղաների իշխանութիւնը վերահաստատվել է։ ի՞նչ պատճառ կայ թալան, յափշտակութիւններ էլ չը սկսվելուն։

Հայ գիւղերից յափշտակեցին ու տարան Դաղ Վերան գիւղի նախիրը։ Շամշադին գիւղից 10 եզներ, Էրմանց գիւղից 25 ձիեր և այլն։ իսկ քիւրդ գիւղերում աւելի շատ են պատահել այսօրինակ յափշտակութիւններ կողոպուտներ ու սպանութիւններ և պատահում ամէն օր։ Իսկ վալին իրան արված գանգատներին բաւականում է «իշաքնա բաքըլըր» (պէտք եղածին ուշադրութիւն կընծայվի) պատասխանով։

Ամէն կողմից գանգատ, ամէն կողմից անբաւականութիւն, իսկ վալին շարունակում է հանդէպ քիւրդերին իր յայտնի փաղաքշանքն ու թոյլատու ընթացքը։ Կարճկան գաւառում Մուսա-բէյ անունով մի յայտնի բռնաւորի, որի դէմ հարիւրաւոր գանգատներ կան, նշանակել է օրման մէմուրի (անտառապետ) և երբ իրան դիտել են տուել, որ նրա պէս՝ յայտնի մարդու ի՞նչպէս յանձնել է այդպիսի կարևոր պաշտօն տալ է, «ի՞նչ կարևորութիւն ունեն գանգատ-բողոքները։ հայերին եթէ հարց՝ելու լինենք, բոլոր քիւրդերին պէտք է քշել հալածել երկրից»։

Վարագի վանքը Սալախանէ անունով մի գիւղ ունի՝ որը 20 տարիներից ի վեր գրաւել է Հասան տղա անունով մի քիւրդ։ Վանքի հոգաբարձութիւնը այս տարի այնտեղ ուղարկում է վանքի Արիստակէս վարդապետին։ վանքի իրաւունքները հաւաքելու ու վալիից խնդրում է որ հարկ եղած օգնութիւնը լինի վարդապետին կառավարութեան կողմից ու դիւրութիւններ տրվեն։ իսկ վալին բաւականանում է գրելով կայմակամին որ՝ եթէ վարդապետին անձի պահպանութեան համար ոստիկանի կարիք զգացվում է։ մէկ ոստիկան տրվի։ իսկ Հասան աղան, որ իւրաքանչիւր տարի 50 – 100 օսմանեան ոսկի վանքի իրաւունքը խլում է։ այս տարի էլ մերժում, չէ տալիս։ իսկ կայմակամը պատասխանում է, որ ոստիկան չը կայ, իսկ եթէ լիներ էլ վարդապետի ապահովութեան միայն կը տրվէր։ բայց ոչ թէ

վանքի իրաւունքը հաւաքելու։ Երբ կրկին բողոք է լինում վալիին, նա բաւականանում է պատուէր տալով կայմակամին թէ՝ մէկ կանչիր։ Հաց տուր Հասան աղային, թէ ի՞նչ պատճառով վանքի իրաւունքը չէ տալիս։ Իսկ Հասան աղան գալիս է կայմակամի մօտ տալիս է իր պատասխանը ու մեկնում, անուշ անելով վանքի 200 չափից աւելի ցորեն։ Հոգաբարձութիւնը երրորդ անգամ դիմում է վալիին, բայց այս անգամ էլ պատասխանում են, որ Իսլազանի պմիս է, ծոմապահութեան սուրբ օրեր, ի-կ վալին ժամանակ չէ ունեցել գրութիւնները աչքից անցկացնելու։ Երբ՝ի՞նչ թիւրքիա։

Կարճկանգ առաւի միտիրը զեղծումներ և գործում միանալով Մուսա բէյին և ուրիշ քիւրդ աղաների հարստահարում է երկրի հայ ու քիւրդ բնակչութիւնը։ Ժողովրդի ներկայացուցիչներն ու գաւառի առաջնորդական փոխանորդ Վահրամ վարդապետ քաղաք գալիս ու բողոք են յայտնում միւդիրի վրա գործի միջամտում է նաև քաղաքի առաջնորդական փոխանորդ Մեսրոպ քահանան, որոնք ներկայանում են վալիին ու յայտնում երկրի ժողովրդի գանգատները միւդիրի վրա, բայց նա յանդիմանում նրանց ասելով. «Ես ձեզ թոյլ չեմ տայ, դուք ձեր պաշտօնից դուրս կառավարչական գործերի միջամտութիւն անէք։ Ձեր պաշտօնը միայն կրօնական է և նրանից դուրս գալու իրաւունք տրված չէ ձեզ։ Եթէ ուրիշ անգամ էլ ձեր չափից դուրս գաք, ես ձեզ հետ վարվելու եմ այլ կերպով»։

Ցիշածս օրինակները և ուրիշ շատերը, որոնց յիշատակութիւնը աչելորդ եմ համարում, փաստեր են, որ Թիւրքիան օրէցօր յետ է դառնում դէպի նախաահմանադրական օրերը, դէպի Համիդեան գլուեի շրջանը։ Անակնկալների աշխարհում են քարոզում և կիրը անունով միայն սահմանադրական է, իսկ մարդիկ կառավարողներ պաշտօնեաներ և մանաւանդ սրբոտները՝ հակասահմանադրական։ Մի կողմ միայն բուական է՝ հրդեհը ասծարձելու և երկիրը դցելու կրակի ու արիւնի մէջ։

(Մշակ) Մտրակ

ՀԱՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԸ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

Մանաւանդ արտասահմանեան հայ գաղութներու մէջ, ուր մայրենի լեզուն տկար է կամ բացակայ թեւարկի փայլի հայ դնտանիքներու մէջ, ստիպողական անհրաժեշտ պէտք մըն է Մանկապարտէզի գոյութիւնը Աղջայրին Վարժարաններու կից։ Ոչով հետև հայ գաղութներու մէջ առաւելն միայն չորս դասարանէ բաղկացած հայ Նախակրթարան հաստատել հազիւ կարելի ըլլալով մեր փոքրիկները եթէ հայ Մանկապարտէզ յաճախած չըլլան, Նախակրթարանին մէջ միայն 3-4 տարի անցնելով կարող չեն ըլլար հրն աւանդուած հայերէն չի մոռնալու չափ հիմնաւոր պաշար ձեռք բերել մայրենի լեզուի և ազգային գիտելիքներու։ այնպէս որ Նախակրթարանի համար եղած զոհողութիւններն ալ ապարդիւն անցած կըլլան։

Իսկ եթէ մեր փոքրիկները նախ երկու տարիի չափ հայ մանկապարտէզ յաճախեն, յետոյ հայ Նախակրթարան մտած օրերնէն կ'սկսին դասերէն օգտուիլ, և հոն ալ չորս տարուան շրջան մը աւարտելով, հայերէնի և ազգային գիտելիքներու մէջ հարկ եղած պաշարը սաացած կըլլան հիմնաւորապէս։ Ալ անկէ վերջ տեղական բարձրագոյն օտար վարժարաններ յաճախելով և բոլորովին օտար տարրերու մէջ ապրելով չեն կորոնցներ ոչ մայրենի լեզուն և ոչ ալ ազգային զգացումը։

Ահա այս խորին համոզմամբ է որ մենք ստէպ Իրաւունքի սիւնակներուն մէջ շեշտած ենք անհրաժեշտութիւնը ամէն հայ գաղութի մէջ հայ Մանկապարտէզ հաստատելու և ամէն գնով զայն շարունակելու։ Ուրախ ենք ըսելու որ Պուլկարիոյ մէջ գրէթէ ընդհանրացած է Մանկապարտէզը։ Նոյն համոզմանը հասած են նաև Պուգրէշի և Գոնսթանցայի ազգայնոց շատերը։ Այս վերջին քաղաքին մէջ, ճամբորդութեանս միջոցին՝ առիթ ունեցայ՝ պատրաստուած միտքերը ի մի բերելով՝ գործնական քայլ մը առնել տալ տեղւոյն երկու տարրէ ի վեր գոցուած Մանկապարտէզը վերաբանալու համար։ Այս մասին օրուան Պատ. Թաղ. Խորհրդոյ բարեացակամ տրամադրութիւնը և ժողովրդեան մէկ ստուար մասին իրենց փոքրիկները նախ ազգային կրթութեամբ և ուսմամբ օժտելու նախանձախնդրութիւնը սվասիս մը թուեցայ ինձ ռումանահայ անապատին մէջ։ Մեր թելադրանքովը ու նախաձեռնութեամբը սկսուած այս ձեռնարկը վստահ եմ թէ ռումէն կառավարութեան բարեհաճ արտօնութեանը պիտի արժանանայ և մենք մեր մեծակայ թիւերէն միոյն մէջ բերկրանքը պիտի ունենանք աւետելու մեր ընթերցողաց Գոնսթանցայի Աղջ. Մանկապարտէզին վերաբացումը՝ ինչպէս միևնոյն բարեբաղդութիւնը ունեցանք, շուրջ երեք տարի առաջ, Պուգրէշի Աղջ. Վարժարանին վերաբացման առթիւ։

Արտասահմանեան հայ գաղութներուն կեանքը եթէ իսպառ փրկել տարակուսելի է՝ գոնէ երկարել կարելի է։ Ց. Գ.

ՀԱՑ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

Տիար,

Պատիւ ունիմ հաղորդելու ձեզի Միութեանս երկամսեայ գործունէութեան յարակից կարևորագոյն եղելութիւնները։

. . 1.—Հետևեալ Մասնաճիւղերը հիմնուած և տեղական Մասնաժողովները կազմուած են։

ՎԻԵՆՆԱ. Դեր. Հ. Գաբրիէլ Ծ. Վ. Մէնէվիշեան Ատենապետ. Տեարք Ժիրայր Խորասանճեան Ատենադպիր, Մաքսուտ Հիւսէյինճեան Գանձապետ, Երուանդ Զատէեան և Տիգրան Փափազեան։

ՍԵԼԱՆԻԿ. Տեարք Թագւոր Բլուսկիւլեան Ատենապետ, Խորէն Ճամճեան Ատենադպիր Մկրտիչ Մինասեան Գանձապետ, Յովսէփ Էքշեան և Արմենակ Աբրահամեան։

ԹՈՒՔԱՏ. Տեարք Յովհաննէս Ապտալեան ատենապ. Կարապետ Աստուածատուրեան Փոխ-Ատենապետ. Սողոմոն Քեստէկեան Ատենադպիր. Սուքիասեան Գանձապետ, Մարտիրոս Զաքարեան։

ՄԱՐՍԻԼԻԱ Տեարք Յակոբ Մէլեան Ատենապետ, Յովհաննէս Սահակեան Ատենադպիր, Արտաշէս Կիւլպէնկեան Գանձապետ, Մկրտիչ Ծէր-Աթանասեան և Վարդան Վեհունի։

ԷՏԻՐՆԷ Տեարք Թագւոր Գույումճեան, Յակոբ Բիլիճեան, Յակոբ Նուաքելեան, Ներսէս Ն. Փափազեան և Գառնիկ Ա. Գազազեան։

ՏՐԱՊԻԶՈՆԻ Մասնաճիւղը հիմնուած է, բայց Տեղական Ժողովին անդամները տակաւին չեն ընտրուած։

ՄԻԼԳՈՐՕՑԻ Բարեսիրաց Միութիւնը վերածուած է Հայկական Միութեան Մասնաճիւղի։

2.—Միութեան կողմէ Զորք-Մարզուանի մէջ հիմնուելիք Որբանոցին մասին պէտք եղած ուսումնասիրութիւնները կատարելու և նախապատրաստական կարգադրութիւնները տնօրինելու պաշտօնով Կիլիկիա ղրկուած պատուիրակներ Տեարք Կ. Շէրիճեան Պէյ և Յ. Օհանեան իրենց տեղեկագրովը, ինչպէս և Ճարտարապետ Տիար Կար. Պալեան իր յատակագիծով, Սիմրայն Որբանոցի շինութեան ծախքը 1700 – 1800 Անգղ. Ոսկի գնահատած ըլլալով, Կեդր. Ժողովը նկատի առնելով որ Տ. Եղեկեան Խան այդ նպատակաւ 1000 Անգղ. ոսկի արդէն Միութեան նուիրած է, որոշեց գնուած 34 տէօնում և Յ. Պ. Բէլիէկեանի կողմէ նուիրուած 20 տէօնում հողին աշխատութիւնները աւարտելէ վերջ, շինութեան գործը յառաջիկային յետաձգել նախնառաջ պակսած գումարը հայթայթելու համար։

Մինչև յիշեալ Որբանոցի շէնքի կառուցումը, Կեդր. Ժողովը որոշեց Սիմրեան անունով 60 որբ պատսպարել Կեդր. Որբախնամ Յանձնաժողովին տնօրինութեան տակ գտնուող Կիլիկեան Որբանոցներուն մէջ։

3.—Հայ—Կաթոլիկ Հասարակութեան Կ. Պատրիարք Գերերջ. Պօղոս Պետրոս ԺԳ Թերզեան բարեհաճած է կոնդակ մը ղրկել Միութեան գովելով անոր նպատակը և օրհնելով աշխատաւորները։

4.—Կեդր. Ժողովը հետևեալ նպաստները ղրկեց՝

100 Անգղ. Ոսկի Մուշի և Սասունի կարօտ հողագործներուն եզ եւ սերմնցուի 50 Անգղ Ոսկի Կ. Պոլիս, Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան պաշտպանած որբերուն։ Յանիէ-Եօրքի ազգայիններէն Տ. Կիւլպենկեան Եղբարք 1500 Ֆր. Մուտքի Տուրք վճարած են Միութեան։

6.—Կեդր. Ժողով կ'ուսումնասիրէ այս պահուս 15 Նախնական Վարժարաններ բանալու ծրագիր մը և կը բանակցի այս մասին Միացեալ Ընկ. Գործադիր Ժողովին հետ։

Խորին յարգանքով

Ի Դիմաց Կեդր. Վարչ. Ժողովի

Ատենադպիր

Վ. ՄԱՎԷԶԵԱՆ

6. Գ —Մասնաժողովներէն կը խնդրուի օր օրին Կեդր. Ժողովին ղրկել իրենց անդամացուցակները և հաշուեցուցակները։

Այս տոթիւ կը ծանուցուի նաև թէ ներկայ Շրջանը կաւարտի 31 Դեկտեմբերին և Ընդհ. Ժողովը պիտի գումարուի 1911 տարուն սկիզբները։

Կնիք

Ծ, Խմբ.

Շնորհակալութեամբ ստացած ենք Բարեգ. Միութեան Տարեկան Տեղեկագիրը (1909-1910), որմէ կարևոր տեղեկութիւններ քաղելով պիտի հաղորդենք մեր ընթերցողներուն։

ՍԼԻՎՆԻ ԱԶԳԱՑԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Չէր արժեր պատասխանել Պր. Մ. Համամճեանի նամակին (Իրաւունք թ. 36)։ Բայց հոն շարք մը խեղաթիւրումներուն ճշտումի կարօտ վիճակը կը բռնադատէ զիս քանի մը տող զոհելու։

Պատրիարքական հրամանով այս քաղաքին ազգային գործոց կարգադրութեան պաշտօնով հոն երթալուս առաջին տեսածս եղաւ Նաչալնիկին կողմէ երկու Պուլկար պաշտօնեաներու ձեռամբ տեղւոյն Թաղ, Խորհրդոյ ընտրութեան ձևակերպութիւն մը։ Քահանան մէկդի էր քաշուած և բանի չէր խառնուեր։

Երթևեկի վրայ էին երեք անձինք, հրաժարեալ Թաղ. Խորհրդի մնացորդները, որոնք ազգ. ամէն գործ երեսի վրայ ձգելով հանդերձ, մատերնին դուրս չէին քաշեր։

Հակառակ այս աղաներուն անհաւանութեան, պնդեցի, և ընտրութիւնը յետաձգել տուի յաջորդ կիրակի օրուան, Նահանգապետին առջև պատասխանատուութիւնը վրաս առնելով։ Թող որ քուէ բերող ալ չկար մէջտեղ։ Աղաները տպեալ քուէթղթեր ծոցերնին պահած էին...մնացածը կը մակաբերուի – իմ յանկարծ ներկայութիւնս դժգոհութիւն պատճառեց հրաժարեալ այս Աղաներուն, որոնք 12-14 տարիներէ ի վեր առանց հաշիւ ներկայացնելու, այս կերպ վերընտրութեամբ, մենաշնորհ ըրած էին իրենց ազգային ...եկամուտներուն վարչութիւնը։

Ասոնք ի սկզբան սպառնացան նոյն իսկ խիստ դաս մը տալ արժ. Տէր Խորէն Քահանային, ճանապարհի ծախքը անոր հաշուոյն դրելու ի պատիժ իր տեղեկատուութեան, զոր կը համարէին իրենց մատնութեան գործ։ Աւելորդ է ըսել թէ ասոնց իրարու հետ յարաբերութիւնը սիրտ ըլլալէ շատոնց դադրած էր։

Այլ սակայն, զուարճալի զուգադիպութեամբ արժ. Տէր Եղբայրս անոնցմէ պակաս դժգոհ չէր պատրիարքարանի այս անօրինութենէն, անձնական այնպիսի սին մտածումներով, որոնք ջղայնութենէ զերծ անձերու համար մէկ սանթիմ արժէք չունին։ Ուստի չուշացան միանալ զիս չուզ հեռացնելու փափաքին վրայ։ Նոյն երեկոյ հրաւերեցին զիս ժողովի մը բաղկացած վերոյիշեալ երեք Աղաներէ, Արժ. Տէր

Խորէն Քահանայէ և ասոր երկու մտերիմներէն, որոնց մին Պր. Մ. Համամճեան հրաժ. Ատենապետին քեռայրը։ Զմոռնամ յիշելու որ նիստը գումարուած էր Տիար Ատենապետին բանեցուցած գինեսան վերնայարկը։ Հոն, ի մէջ այլոց, յիշեցուցի ասոնց Թաղ. խորհրդի մը ընտրութենէն առաջ, ընտրողական ժողովի նշանակման և այլ օրինական նախապատրաստութիւններու անհրաժեշտ պէտքը։ Եւ անա այս հաւաքոյթէն բամնուելէս կէս ժամ յետոյ հեռացումս պահանջող դիր մը հասաւ ետևէս, պաշտօնապէս կնքուած և ներքևը ստորագրուած ընտրողական ժողովոյ ? կողմէ։

Ասկէ առաջ ընտրողական ժողովոյ անուն անգամ չկար մէջտեղ։ Այս մասին Պր. Մ. Համամճեանի պատմութիւնը զուտ առասպելէ։—ինքնընտիր ժողովին անարգական գրութիւնը ստանալուս պէս փութացի հեռանալ։ Սակայն Պուլկար պաշտօնեաներուն խոստմանս համաձայն պարտաւոր էի Նահանգապետին բացատրութիւն տալու տեղի ունեցած յետաձգումին համար։ Ուստի Պուրկազէն անցնելուս գնացի տեսնուելու քարտուղարին հետ (Նահանգապետը հրաժարած ըլլալով բացակայ էր)։ Կրնայի յայտնել Սլիվէնի ազգայնոց ոման տխուր ճարպիկութիւնը։

Զախողութիւնս վերագրեցի կառավարական պաշտօնէից միջամտութեան և լուսաբանեցի մեր Պատրիարքարանի իրաւասութեան սահմանը։ Շումլա հասնելուս փութացի Սրբ. Պատրիարքին ղրկելու տեղեկագիրս ներփակելով ծանքի հաշիւս և վերոյիշեալ նամակը։

Օրեր անցան Սեպտ. 7 ին Պուրկազի Նահանգապետութենէն ստացայ հեռագիր մը, հրաւիրող զիս Սլիվէն երթալու, հոն կատարուելիք ընտրութեան նախագահելու համար։ Նորէն փութացի։ Պուրկազէն անցնելուս տեղեկացայ որ Նախարարութիւնը լիազօրութիւն տուած է ինձ մեր եկեղեցւոյ օրինաց համաձայն կատարելու Թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը։ Սլիվէն հասնելուս, առաջին գործս եղաւ տեսութեան հրաւիրել արժ. Քահանան և հրաժ Թաղ. Խորհրդոյ ծանօթ Անդամները։ Վերջիններէն մէկը միայն երեւաց նպատակս իմանալու, և ճամպրկեց դուրս ելնելու։

Յետոյ երբ այցելեցի Նաչալնիկին, որովհետև իմ մասին հեռագրով յանձնարարուած էր իրեն, տեսայ որ ժամ մը առաջ զիս տեսնելու եկող Աղան անոր Քարտուղարին քովէն ելնէր, սա փութալով եկաւ բաներ մը փսփսաց իր մեծին որ սակայն ալանջ չկախեց։ Այս կէտը որակել պր. Համամճեանին կը թողում։ Նաչալնիկը վերջապէս, իր մօտ կանչելով յուզղութիւն հրաւիրեց այս մարդիկը, որոնք այն ատեն ճարահատ մօտս գալով պատրաստակամութիւն յայտնեցին մեր աչք օրինաց համեմատ շարժելու։ Հոս ալ խորհրդածութիւնը Պատ. Խմբագրութեան և ընթերցողին կը յանձնեմ։ Հետևաբար անմիջապէս հրաւէր ուղղելով նոյն գիւղերի իսկ 20 է աւելի ազգայիներով ժողով գումարեցի, նշանակուեցան ընտրողովի վեց Անդամներ, երեքը հրաժ, Թաղ. Խորհրդէն և երեքը ներկայից մէջէն։ Հո՞տ ես Պր. Համամճեան։ Ու սկսանք այսպէս գործադրել մեր Ազգ. Սահմանդրութեան տրամադրութիւնները։ Մեր գործելու ընթացքին մէջ Արժ, Տէր Խորէն եղբօր դէմ սարքուող անիրաւութիւնները կախելու և ապագային վէճի կորիզները ոչնչացնելու համար ամենուն յայտնի նուիրած ջանքերս գոհունակութեանս մեծագոյն բաժինը կը կազմեն։ Իսկ գալով ընտրութեան գործին ամենայն օրինաւորութեամբ սեպտ. 14 ին կատարելով քուէարկ. 85 ընտր. 64ին մասնակցութեամբ, նոր Թաղ Խորհուրդը միևնոյն օր դիւանն ալ կազմեցինք ու տեղեկագրեցինք ազգ. Պատրիարքարան և Պուլկար կառավարութեան չմոռնալով, այս ըստ տարբական քաղաքավարութեան, մասնաւոր գրով շնորհակալութիւն յայտնելու նաչալնիկին. խնդրելով մրանգամայն որ նոյնը մատուցանէ իմ կողմէն պատկանեալ իշխանութեան մեր եկեղեցական գործոց հանդէպ ցոյց տուած բարեացակամութեան նկատմամբ։ Ծածուկ էր այս գիրս։ Զէր միթէ ամենուն գիտակցութեամբ։—Ամենէն վերջը. բնական էր որ ներկայացնէի երկու անգամ Շումլայէն-Սլիվէն երթուղարկի և քսաներեք օրուան ապրուստի ծախքս։ Այս առիթիւ տեղէ մը նպաստ չէի ընդունած և վարձատրութեան գրն ալ չէր իմ պահանջածս։ Ընդհակառակը, Խաչվերացին Պատարագելով, ժամուցի և թապախի արդիւնքը կանխաւ յատկացուցի ծախքերուս հաշուոյն։ Ծախքի կրկնութեան գալով ատոր պատասխանատուն որոնք որ են Պր. Համամճեան գետէ որ անոնց մէջ դլխաւոր դերակատարը ինք եղած է։

Ասոր անոր իրաւունքը ոտնակոխել աշխատելու տեղ ազգին շահը պէտք է փնտռել յոռի տնտեսութենէ և զեղծում ներէ ազատ մատակարարութեան մէջ։ Պր. Համամճեան կը հասկնայ այս բառերուն նշանակութիւնը։ Իսկ իմ այնքան յոգնութիւններով և խղճամիտ ծառայութեամբ ձեռք բերած յաջողութենէս յետոյ ելնել ետևէս քարնետել եթէ ոչ ուրիշ բան, գէթ խոշոր տեսակէ ԱՄՕԹ է։

Օճան Բաեյ. Մանդակունի
ՈՒՄԼԱ

ԱԶԳԱՅԻՆ

Ազգ. Երեսփ. Ժողովոյ եռամսեայ դադարը լրացաւ և Նոր շրջանի առաջին նիստը գումարուեցաւ վերջին ուրբաթ օր ի ներկայութեան 85 երեսփոխաններու։ Ատենական զործողութիւններէ վերջ կարդացուեցան Դուրեան Պատրիարքի և Ազգ. Վարչութեան հրաժարականները։ Պատրիարքը իր հրաժարագրով կը խոստովանէր իր անկարողութիւնը այդ բարձր պաշտօնին մէջ և իր անյաջողութիւնը յարաբերական և ներքին խնդիրներու գոհացուցիչ կարգադրման մասին։ Վարչութեան հրաժարականը մերկապարանոց կ'ընէր կուսակցականաց ի մասնաւորի Դաշնակցականներու անորակելի վարմունքը, Ազգը անիշխանութեան և յարաբերական գործերը անյաջողութեան մատնելու մէջ։ Այս վերջինը պատճառաբանեալ հրաժարական մ'ըլլալով, պատասխանատուութեան մեծագոյն բաժինը կը ծանրացնէր դաշնակցականներէ անմրջապէս յետոյ Պատրիարքին վրայ. որ պարզապէս Վարչական ժողովոյ որոշումները փոխանակ գործադրութեան դնելու. անոնց հակառակած և իր մեղկ ու վարանոտ վարմունքով տեղի տուած է որ դաշնակցականներ իրենց յանդգնութիւնը հասցնեն մինչև ոճրագործութեանց և վերջին օրերս ալ ազգին Վարչապետին (Յօք. Սեղբոսեան) գլուխը ջախջախելու։

Ժողովը որոշեց Պատրիարքին հրաժարականը յաջորդ նիստի օրակարգին անցնել. իսկ Վարչութեան հրաժարականին վրայ բուռն վիճաբանութիւններ տեղի ունենան։ Դաշնակցական երկփոխանք կը պնդէին որ իբրև պարզ հրաժարական կամ իբր շրջանը աւարտած ընդունուի. բայց ժողովականներու ստուար մեծամասնութիւնը կը փափաքէր որ Վարչութիւնը շարունակէ իր պաշտօնը։ Գրչերը վրայ հասնելով, այդ վիճաբանութեան շարունակութիւնը ձգուեցաւ յառաջիկայ ուրբաթի նիստին, և ի պաշտօնէ յանձնարարուեցաւ Վարչութեան որ առայժմ շարունակէ իր պաշտօնը։

Մինչ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ այս վիճաբանութիւնը տեղի կունենար դռնփակ, եկեղեցւոյ դրան դուրսի կողմը «տղերք»ներու խումբ մը խրոնուած կը ջանար ներս խուժել թէև աւելի հեռուն ծրճաբաններու ու խանութներու մէջ և փողոցի անկիւնները ժողովրդեան աւելի ստուար բազմութիւն մը կը սպասէր, այս անգամ տղերքներու յանդգնութեանը լաւ դաս մը տալու նպատակաւ։ Բայց գործը հոն չի հասած ոստիկանութիւնը ինքնաբերաբար հարկ տեսաւ ցրուել եկեղեցւոյ դրան առջև խռնուած տղերքը, յայտարարելով թէ պաշարման վիճակի մէջ չէ ներելի այդ օրինակ համախմբում. առարկողները ցրուեցան սուինաւոր ոստիկաններու միջոցաւ. ընթրոստներէն ոմանք ձերբակալուեցան և մէկը ուսէն վիրաւորեցաւ թեթև կերպով։

—Երուսաղէմի Պատրիարք Տէր Յարութիւն արքեպ. Վեհապետեան վախճանած ըլլալով, Երուսաղէմի նորապաշակ Տեղապահ սրբազանը՝ որ Էջմիածնէ վերադարձած Պոլիս կը գտնուի, պիտի փութայ իր պաշտօնատեղին՝ Պատրիարքական ընտրական գործողութեանց նախագահելու համար

—Թէհրանի մէջ տարածուած է թէ Եփրեմ սպանուած է։ Սաթթար խանը և իրենները զինաթափ ընելու համար. անոնց դէմ Եփրեմին կռուած և Սաթթար խանը վիրաւորած ըլլալը պատճառ եղած է որ Պարսիկ ժողովուրդը Հայերուն վրայ ծուռ աչքով նայիլ սկսի։ Եթէ նոր խռովութիւն մը ծագի Պարսկաստանի մէջ կասկած կայ որ առաջին զոհերը Հայերը ըլլան, Եփրեմի այդ անխորհուրդ քայլին հետեւանօք։ Մշակ կը գրէ թէ Պարսիկ զօրականները զգուշացան Սաթթար խանը նենման անձնուէր ու ժողովուրդական յեղափոխապետի մը դէմ կռիւ վարել և դիտմամբ Եփրեմը կոչեցին այդ գործին։

—Կովկասի Զինուորական դատարանին վճռովը Խորէն Ակոնեան և Յարութիւն Մխոյեան կախաղան հանուած են. ասոնք ամբաստանուած էին երկրաչափ Կէշզէրի սպանութեան գործին մէջ։

—Անչարժ գոյքերու առևծախի առթիւ Պատրիարքարաններէ տրուած իլմուխապէրներու ծանօթ խնդրին համար Խառն Ժողովը բազրիր մը պատրաստելով կառավարութեան մատուցանել որոշեց։ Նոյնիսկ բազրիրներով կը բողոքին միւս հասարակութեանց Պատրիարքարաններն ալ, նոյնպէս Հրէից Խախամապետ։

—Տփղիսցի Կարապետ Վարդանեան 2000ս ռուպլի կտակած է Սչոյ Ս. Կարապետի վանքին. անոր տոկոսով օգնելու ուսանողներուն։

—Սլիվէնի Թաղ. Խորհրդոյ նոր ընտրութիւնը վաւերացուած է Պատրիարքարանէ։

ՕՐԻՈՐԴ Թ. Ա. ՓԱՓԱՋԵԱՆ

Վիրաբոյժ Ատամնաբուժական

Վկայեալ Բարիզի Ատամնաբուժական վարժարանէն (Ecole Dentaire de Paris) և Նանսիի բժշկական համալսարանէն։

Կը դարմանէ բերանի և ակռայի հիւանդութիւնները, կը լեցնէ ciment, amalgame, email, ժամանակէ է anrification (ակռով լեցնել) Նորահնար մեթոտներով կը շինէ Bridge-Work, conronne ատամնաշար առանց կեռի, Ծուռ, դուրս ցցուած ակռաները կը շտկէ առանց ցաւի։

Անոման հականեխում (asepsie)

Հիւանդ կ'ընդունի ժամը 9-12, 2-6 իրենց բնակարանը փողոց Վիթրասովա թիւ 1։

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՒՈՒՆՔ»Ի

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻ ՄԱՔՈՒՐ ԵՒ ՁԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԳՈՐԾԵՐ

Հարսանեկան Հրաւիրագիր, Այցատոմս, Նամակագլուխ, Պահարան Պարտամուրհակ, Հաշուեքուղթեր և ուրիշ գործեր

Հայերէն, Պուլկարերէն, Ֆրանսերէն եւ Ռումաներէն

Մեզ դիմողներու ճաշակին գոհաւում տալու համար Տպարանս նոր բերել տուած է ամէնավերջին սիստէմի գործիքներ և տառեր

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ ՄԸ

ԹՈՂ ՆԵՐԵՆ

Իրաւունքի երեք շաբաթ չի հրատարակուելուն աւիթիւ ներողութիւն կը խնդրենք մեր կարգմը պարտաճանաչ ու մեզ քաջալերող բաժանորդներէն։ Անոնք այդ սերումը թող ընեն ոչ թէ մեզ, այլ մեր այն ընթերցողներուն, որոնք տարիներով թերթ ստանալէ յետոյ, թերացան իրենց պարտքը վճարելէ և մենք այդ պատճառաւ ստիպուեցանք մեր քսակէն ծախսելով ընդ. չուր և ընդ ցամաք ճամբորդելու տաժանքը կրելը։

Մենք այդ բոլոր դժուարութիւնները յանձնառնելով ճրոշած ենք յարատև հաստատամբտութեամբ մը շարունակել Իրաւունքի հրատարակութիւնը, քաջալերուած այն բարոյական գնահատումներէն որոնք հայ ազգին էն արժէքաւոր շրջանակներէն, մարմիններէն ու անձնաւորութիւններէն եղած են ու կ'ըլլան մեզ, և այն գիտակցութեամբ թէ Իրաւունք իր անկախ դիրքով իր կարևոր դերը ունի կատարելիք Ազգին ներկայ թահուրոհին և մանաւանդ Պալգանեան հայ գաղութներուն մէջ։ Խմբ.

ԻՑԶԱՀԱԹ

Կազէթաներզը՝ շու իքի պուչուգ հաֆթա թէէխիրի արզուումուզ խիլաֆը՝նա օլմուշ տբր. զիրա պիր չօգ ապօնէլէրիմիզ 2 3 սէ. նէլիք կազէթա պէոէյինի էօտէ. մէտիքլէրի իչիւն՝ մէսարիֆ իտուպ թահսիլէ չբգմայա մէճ. պուբ թահսիլէ գէլմայա մէճ. պուբ. Պու խուսուստա վաղիֆէչինաս ապօնէլէրիմիզին աֆվը՝նը իսթիհամ էյլէրիզ.

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻՒՐՔԻԱ

Ռումէլի վէ Անատօլու գրթալարը՝նտա եաբըլմասը մուգարրէր օլան 10000 քիլօմէթրօ չէչէլէրին ինչասը՝ն ֆիյէ նէզարէթի թարաֆը՝նտան իւչ ֆրանսըզ շիրքէթլէրինէ իհալէ օլունմուշ տբր.

Թօգատ վէ Ասասիա թարիգի իլէ Սամսօնտան Սիվասս կիտէճէք օլան շըմէնտըֆէրին ինչասը եագը՝նտա պաշլայաճագ տբր. Քէզա Ատաբազարտան Պոլույա պիր շըմէնտըֆէր խաթթը եաբըլաճագ տբր.

—Բսբէրթ, Քէրքուք. Իսկէնտէրուն վէ Վան վիլայէթինտէ պուլունան կազ (բէթրօլ) մատէնէլէրի իշլէթմէք իչիւն թէտպիրլէր էլէ ալը՝նիյօր.

—Սթանպօլտա տէմիրտէն վէ չ՝ելիկտէն մէտուլ վէ 60 մէթրօ կէ՝նիշլիքտէ ճէսիմ պիր քէօբրիւ ինչասը պիր ալման շիրքէթինէ իհալէ օլունաճագ տբր. Մէսարիֆաթը պէլէտիյէ սանտըղ՝նա այիտ օլաճագ տբր.

—Պօնտատան Մակեդոնիայա հիճրէթ իթմիշ վէ թիւրք հիւքիւմէթինտէ՝ն խայիր բարա ալմըշ օլան իսլամ մուհաճիրլէր թէքրար Պօ՝նտայա ավտէթ իթմէք իսթէյօր.ար, ֆագաթ մէօն թիւրք հիւքիւմէթի կիթմէլէրինէ մանի օլիյօր վէ օ՝նլարտան կէրի իսթէյօր վէրտիկի իանէի.

—Իսթիգյազ իչիւն Ֆ.անսանը՝ն չարթլարը՝նը Պապը Ալի գապուլ իթմէտիկինտէ՝ն տօլայր, շէհմի Ալմանիա պանգալարը՝նտան իսթիկրազա չալըշըլիյօր.

Մէսմուաթա կէօրէ Տէօյչէ պանգրն չարթլարը՝նը Պապը Ալի գապուլա չայան կէօրմէքտէ իմրի.

—Բսմէլիտէ իճրա օլունան պէօյիւկ մանէվրատան կէրի տէօ՝նէն ասքէրլէրտէ գօլէրա խասթալըղը պաշ կէօսթէրմիշ տիր. Իո զլաւ գարանթինէ եօլլանան 400 ասքէր եօլտա գաշ՛ըշլար. Թէքիրտաղ ճիվարը՝նտաբի օրտուտա տախի գօլէրա պաշ կէօսթէրմիշ տիր.

Լ՝ոիրնէտ այը՝ն 23 ինտէ 13 քիշի խասթալանմըշ վէ 5ի էօլմիւշ տիր.

Սթանպօլտա 22 քիշի խասթալանմըշ վէ 11 էօլմիւշ.

Քէզա Պրուսատա ասքէրլէրտէն չօտլար գօլէրայա միւպթէլա օլմուշ տբր.

—Եէնի վուգուաթլար պէհանէսի իլէ Սքիւպ վիլայէթինտէքի միւսլիմանլար թօբլանան սիլահլարը՝նը հիւքիւմէթտէն կէրի իսթէյօրլար. Բէվայէթէ կէօրէ հիւքիւմէթ հէր պիր քէօյ իչիւն եիկիրմիշէր թիւֆէնկ վէ ֆիշէնկլէր թէվզի իտէճէք իմիշ. ֆագաթ շու շարթլէ քի՝ թիւֆէնկ վէ ֆիշէնկ ալանլար պօշանան հէր պիր ֆիշէնկ իչիւն իյզահաթ վէրմէկէ մէճպուր օլաճագ.

—Դարատաղ սինօրը իւզէրինտէ պուլունան Արնավուտլարա հիւքիւմէթ թէքրար սիլահ թէվզի իտէր իմիշ.

ԱՃԷՄԻՕՏԱՆ

Իրան մէմալիքինտէ սօն կիւնլէրէ գատար հայտուտլըգլար, միւգաթէլէլէր վէ գարըշըգլըգլար տէվամ իթմէքտէ օլտըղը՝նտան՝ էճ՝նէպիլէրին տախի միւթէզարուր օլմասը սէպէպի իլէ՝ պուն՝տան իքի հաֆթա մուգատտէմ ինկիլիզ տէվլէթի Աճէմ հիւքիւմէթինէ պիր նօթա վէրուպ, իւչ այ զարֆը՝նտա էկէր Իրան մէմալիքի թէսքին իտիլմիզ, իսէ ինկիլիզ տէվլէթի քէ՝նտի Հինրիա ասքէրլէրինին վասիթասը իլէ թէսքինէ գալգըշաճաղը՝նը իխթար իթտի.

Իչպու իխթարը Սթանպօլտաքի Աճէմլէր «Ինկիլիզլէր Աճէմիստանը զապթ իտէճէք» մանասը՝նա օլարագ, պիր միթինգ թէճէմմիւ իթտիլէր վէ պու միթինկտէ Ալման իմբէրաթօրը՝նը Աճէմիստանը հիմայէյէ տավէթ իթտիլէր. Հալպուքի՝ Ինկիլթէրան՝ը էկէր էօյլէ պիր մազսէտի օլսա՝ը՝ը իւչ կիւն տախի վատէ վէրմէքսիզին՝ Թիւրքիա՝ը՝ը վէ Բուսիա՝ը՝ը եաբտը՝ղը կիպի ասքէրինի Աճէմիստանա սէվգ իտէր իտի. Ֆագաթ Ինկիլիզլէրին՝ ասըլ մագսէտի Աճէմ մէմալիքինին թէսքինի վէ օրատա պուլունան ինկիլիզ մէնֆաաթլարը՝ը՝ը մուհաֆըզասը տբր.

ՏԱԽԻԼԻՑԷ

Պունտան 25 սէնէ էվվէլ ինչա օլունմուշ օլան շէհրիմիզ պէօյիւկ Պուլկար քիլիսէսինին թագտիսի (օծում) տիւնքի կիւն բէք մութանթան ուրէթաէ իճրա օլունտու։ Զար վէ Զարօցա հազարաթը վէ մախտումլարը բրէնսլէր տախի մախսուսէն թէշրիֆ պուլուրմուշլար ըտը։ Քէզա Սօֆիա տէսբօթը վէ տիկէր բուհանիլէր պէօյիւկ պիր հէյէթ թէշքիլ իտէրլէր իտի։ Քէօյլէրտէն վէ պազը գասապալարտան տախի խայը էհալի թբօլանմըշ օլուպ, քիլիսէնին տըշարըսը տախի խընճախընճ տօլմուշ ըտը։ Զար հազրէթլէրի սաաթ 12-սուլարը՝նտա աիլէսի իլէ քիլիսէտէն չըգարագ, ֆայթոնլարա բագիպէն իսքէլէյէ վէ օրատան Էլքսինօկրատ սէրայը՝նա ազիմէթ իթտիլէր։

—Սօֆիատա եահուտիլէրին «Երու զալիմ» նամ սալօնը՝նտա Սիօնիսթ շիրքէթինին մէճլիսի ումումիսի թէճէմմիւ իթտիկի էանատէ՝ պիր թագրմ եահուտիլէր մէզքիւր սալօնա հիւճիւմլէ՝ բէ՝նչիրէ ճամլարը՝նը վէ լամպալարը գըրտըլար։ Սիօնիսթլէր տախի պասթօ՝նլարը իլէ հիւճիւմ իտէ՝նլէրաէ՝ն պիր գաչը՝նը գաֆասը՝նը եարարագ, պէօյիւկ վէլվէլէ գալտըրտըլար։ Բօլիսիա իչէ պիլ միւտախէլէ՝ հիւճում իտէ՝նլէրի տըշարը չըգարտը վէ Սիօնիսթլէր մէճլիսէ տէվամ իթտիլէր։

—Կէչէ՝ն հաֆթա ագշամ սաաթ 8 սուլարը՝նտա չէհրիմիզտէ Գասապ Յակոբ նամ միլլէթտաշըմըզ Վարնալը պիր թիւրք իլէ դանվէտէ՝ն չըգուպ էվինէ կիտէր իքէն՝ թիւրքլէ՝ն խասիմի պուլը՝նան տիկէր պիր թիւրք անլէրէ թէսատիֆլէ՝ բէվօլվէրի չէքուպ, էն էվվէլ թիւրքի վէ սօ՝նրատէ Յակոբը վուրմուլ վէ գաչմըշ տբր։ Վուրուլան թիւրք օթէլ սահրպը մութէվէֆա հաճի Հասանը՝ն տամատը օլուպ, իլք տարպէտէ տիւշիւպ էօլմուշ տբր։ Յակոբ պիր կիւն պէր դայաթ գալմըշ իսէ՝ դրշ պիր սէօզ թէքլիւս իտէմէմըշ տիր։ Գաթիլէ՝ն քըմ օլտըղը ճրտտի սուրէթտէ անլաշըլմամըշ իսէտ՝ մութէվէֆա հաճը Հասանը՝ն թէալիւգրաթը՝նտան շուբհէ օլունմազէ, պազըլարը թէվզիֆ օլունմուշ տբր։

—Եէնի տախիլիյէ նազիրը Մ. Մօշանով պիր գօմիսիօ՝ն թէշքիլի իլէ կէչէ՝ն սէնէքի Բուսֆուգ վագասը՝նը՝ն թէտգըգը՝նը անա իտալէ իթմիշ տբր։ Եանա պիր թիւրք գէզը՝ն պիր Պուլկարա գաչմասը՝նտան տօլայը զուհուրա կէլէ՝ն ֆաճէալարը՝ն մէսուլէրինը պուլուպ ճէզալամագ վէ պու եօլէ էհալի՝նին հիւսնի թէվէտճուհը՝նը Տէմօկրատ բարթիսինէ եէնիտէ՝ն ճէլպիթմէք իսթէյօր։

ԻԹԹԻՀԱՏ ՕՍՄ. ԳՕՄԻԹԷՍԻ

Ժէօ՝ն թիւրքլէրին իթթիհատ վէ թէրագգը գօմիթէսի պու կիւ՝ն լէրտէ Սէլանիքտէ Գօ՝նկրէ թէճէմմիւ իթմիշ տիր. Պու գօ՝նկրէ գըրգ քիշիտէ՝ն միւթէշէքիլ տիր.

Մ՝իւզէքէրէ օլունաճագ մէսէլէլէր չունլար տբր.

1) Գօմիթէ՝նին կէչէ՝ն սէնէքի ամէլիաթը՝նը՝ն բաբօրթ թահթը թէզէքիւրէ աալը՝նաճագ.

2) Գօմիթէ՝նին տախիլի գանուն՝նամէսի՝նին թէտգըգը.

3) Գօմիթէ՝նին խարիճի բօլիթիգա իլէ միւ՝նասէպաթը.

4) Մէքթէպլէր մէսէլէսի.

5) Տէվլէթլէրին իթթիֆագ վէ իթիլաֆ մէսէլէսի.

6) Մէմալիքին մատտէ՝ն վէ մա՝նէ՝ն թէրագգըսը իչիւ՝ն իգթիզա իտէ՝ն թէտպիրլէր.

7) Մալիյէ մէսէլէսի.

8) Գօմիթէ՝նին տախիլի բօլի՝թիգա.

9) Թիւրքիատա թիւճարիյէ վէ սէ՝նայի շիրքէթլէրին թէշքիլի վէ թավսիի (տարածում).

Իթթիհատ Գօմիթէսի պուկիւ՝նքի հիւքիւմէթ եախոտ Մէճլիսի մէպուսէ՝նին էքսէրիյէթի տէմէք օլտըղը՝նտան, իշպու Գօ՝նկրէտէ հալլ իտէճէկի. Մէզքիւր մուհիմ մէսէլէլէր իչիւ՝ն վէրէճէկի գարարլարը՝ն պիւթիւ՝ն Թիւրքիա էհալիսի իչիւ՝ն պէյիւկ էհէմմիյէթի օլաճագ տբր.

ԹԻՒՃՃԱՐԻՑԷ

ՁԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՑ		
Վակօ՝ն 100 քիլօ.		13./16.
Արապա	15-80 լիպ.	10·43
ԱՐԲԱ		
Վակօ՝ն 100 քիլօ		9.80
Արապա	45-52 լիպ.	5.88
ԵՈՒԼԱՑ	արապա	4.
ՁԱՎՏԱՐ 100		9.80
Արապա		5.70/7.
ՖԱՍՈՒԼԻԱ	100 քիլ.	25.20/27.25
ՏԱՐԸ	» »	3.53
ԴՕԼՕՋ	արապա 55-60 լպ.	եօդ
ՄԻՍԻՐ 100 քիլօ		8.60/10.60
Արապա		7.17
ՖԻԳ	100 քիլօ	12.80

ՊԱԴԱԼԻԷ

Վառնա բիւցասը՝նտա պագդալիյէ մալլէրին պու կիւ՝նքի ֆիյաթը, ալթը՝ն ֆըրանք իլէ։

ԳԱՀՎԷ	2.45/2.65
ՇԷՔԻՐ ղէմցէ քէլէ	եօդ
ՇԷՔԻՐ քէսմէ սանտըգ	—47.50/48
ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը	46.
» Ինկիլիզ »	31.
» Բիզօ՝ն »	53.
» Ֆիլիպէ »	45/46
ԿԱԶ Պաթում Սանտըղը	9.60
» Թբայան »	եօդ
ՁԷՅԹԻ՝Ն ԵԱՂԸ քիլօ	1·80—1.90
ԳՈՒՐՈՒ իւզում	.90
Եումուրթա	8.

ԾԱԽՈՎ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք»ի խմբագրատունէ՝ն կարելի է ստանալ հետեւեալ գիրքերը.

ՂԱՐԻՊ ԱԽՊԷՐ	գին	1. ֆր
ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ	»	1. »
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր	»	1·20 »
ԹԻԱՊԱՐՏ Բ. »	»	2·80 »
ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ	»	1. »
ՊՈՒԼԿԱՐԱՑ ՊԱՏՄ.		50 սն.
ԻՐԱՒՈՒՆՔԻ հաւաքածոյ մէկ տարուանը		12 ֆր.

Издатель: Х Курбетянъ

Տպարան «Իրաւունք»ի Վառնա